ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«27» օգոստոսի 2024թ. N ՄՈ/414-Ա

ք. Արմավիր

ԼԱԼԱ ՓԻԼԻՊՈՍՅԱՆԻՆ «ԲԱՂՐԱՄՅԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի N 181-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 4-ով կետով և 6-րդ կետի 2-րդ ենթակետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի 2024 թվականի օգոստոսի 27-ի զեկուցագիրը.

որոշում եմ՝

1. «Բաղրամյանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար նշանակել «Բաղրամյանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության պատմության ուսուցչուհի Լալա Փիլիպոսյանին:
2. Լալա Փիլիպոսյանի աշխատանավարձի վճարումն իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ